ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Ուսանողների կարիքների վերհանման և գնահատման արդյունքների վերլուծություն

Նպատակ ունենալով բարելավել կրթության որակը՝ Քոլեջն իրականացնում է ուսանողների կարիքների և առաջարկությունների վերհանում: Այն իրականացվում է ոչ միայն հարցաթերթիկների, այլ նաև Քոլեջում տեսանելի վայրում փակցված <<Առաջարկությունների վերհանման ծառ>>-ի միջոցով, որի վրա ուսանողները պարբերաբար փակցնում են իրենց կարիքների մասին առաջարկությունների թերթիկներ: Այն օգնում է բարելավել կրթական միջավայրը և կրթության որակը, ներդնել բարելավմանն ուղղված նոր մեխանիզմներ:

Ուսանողների առաջարկներն առավելապես վերաբերում են մասնագիտական առարկաների ավելացմանը, այն է՝ <<Դերասանական արվեստ>> մասնագիտությամբ առաջին կուրսի մոտ ավելացնել մասնագիտական առարկա: Սակայն, այս հարցի վերաբերյալ ուսումնական մասի համակարգողների հետ քննարկումների արդյունքում պարզվեց, որ ուսումնական պլանով առաջին կուրսում թույլատրվում է բացառապես հանրակրթական առարկաներ անցնել:

Ուսանողներն առաջարկել են նաև, որ ցածր կուրսի ուսանողներին հնարավորություն ընձեռվի բարձր կուրսի մասնագիտական դասերին ներգրավվել:

Հարկ է նշել, որ նշված առաջարկը մասնակի իրականացվում է՝ բարձր կուրսի բաց դասերին, ներկայացումներին, բեմականացումներին ցածր կուրսի ուսանողներին հրավիրելու միջոցով: Իրականացվել են նաև բարձր կուրսի ուսանողների կողմից՝ դասախոսի ուղղորդմամբ ցածր կուրսերի ուսանողների մոտ դասը վարելու և պրեզենտացիա ներկայացնելու եղանակով:

Աշխատանքներ կտարվեն հիշյալ գործընթացում առավել շատ կուրսեր ներգրավելու ուղղությամբ: